# 497

1. Այսօր կուզեմ ես Քեզ տեսնել,
Աստվածային խոսքդ լսել,
Միայն Քո խոսքը ինձ կտա
Ճշմարիտ ճանապարհ և կյանք:

Այսօր միայն ես հասկացա՝
Դո՛ւ ես Աստվածը ճշմարիտ,
Կուզեմ փարվել այսօր ես Քեզ,
Սրտեր քննող Արքա՛ հզոր:

2. Բարի Աստված, միայն Դու ես
Որբին Հայր և աղքատին Տեր,
Ճիշտ ուղղություն մտքին տվողն
Դո՛ւ ես, Հիսուս, ամենազոր:

3. Այսօր կուզեմ Քեզ հանդիպել,
Կուզեմ սրտիս ցավը պատմել,
Ոչ մի բան չբուժեց ցավն իմ,
Դո՛ւ ես Բժիշկը ճշմարիտ:

4. Այսօր ես Քեզ Տեր եմ ընտրում,
Ե՛կ, բնակվիր Դու իմ սրտում,
Դո՛ւ ես, Հիսո՛ւս, կենաց ծառը,
Ով Քեզ ընտրի՝ պիտի ապրի:

5. Այսօր կուզեմ Քո սերն զգալ,
Գրկումդ հանգչել, Քեզ վայելել,
Չկա ուրիշ անուն, Հիսո՛ւս,
Այնպես թանկագին ու անուշ: